

[illegible]



MARCHÉ ADONIS

Un univers de fraîcheur

Ste-Catherine - Griffintown - Anjou - Sauvé
Place Vertu - DDO - Brossard - Laval - Laval Est - Gatineau
Scarborough - Mississauga

www.groupeadonis.ca /



«Անհրաժեշտ Է Ներազգային Համերաշխութեամբ Ծգնաժամի Յաղթահարումը` Նոր Որակի Իշխանութեան Զեւաւորմամբ». Յակոբ Տէր Խաչատուրեան

Հայաստանի մէջ տիրող կացու–թեան եւ քաղաքական ներքին զարգա–ցումներու մասին «Երկիր»–ը հետեւեալ հարցազրոյցը կատարած է ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանին հետ։

«Ե.».– Ինչպէ՞ս կը գնահատէ՞ «Քորոնա» համավարակին դէմ պայ– քարի այսօրուան վիճակը։

Յ. Տ. Խ.– Այդ մասին Հայաստանի մեր կազմակերպութիւնը արդէն տուած է իր գնահատականը` հիմնուելով իրա– վիճակի բազմակողմանի վերլուծումնե– րու եւ մասնագիտական տեսակէտներու համադրման վրայ։ Համաճարակը, ան– շուշտ, համաշխարհային փորձութիւն է՝ ժողովուրդներու եւ պետութիւններու համար։ Ոչ մէկ երկիր, ոչ մէկ կառավա– րութիւն լիարժէք պատրաստ էր այդ ծա– ւալի առողջապահական, տնտեսական, մարդկային, հոգեբանական, անվտան– գային եւ այլ խնդիրներու դիմակալ– ման։ Բայց պետական հաստատութիւն– ներու, կառավարութեան կազմակերպած աշխատանքն է, որ պարտ էր հնարաւոր դարձնել արագ արձագանգելը, համար– ժէք լուծումներ գտնելը՝ նախ կասեցնե– լով վարակի հետագայ տարածումը, ապա անոր դէմ արդիւնաբեր պայքար շղթա– յազերծելով։ Յաւօք, ճիշդ այս առումով Հայաստանի կառավարութիւնը թոյլ տուաւ լուրջ սխալներ, որոնց հետե– ւանքն է նաեւ այսօրուան մտահոգիչ ու վտանգաւոր իրավիճակը։ Տակաւին կ'ակնկալենք, որ Հայաստանի քաղաքա– կան ղեկավարութիւնը կը դրսեւորէ պե– տական մտածողութիւն ու անկէ բխող գործելաոճ։ Հակառակ պարագային կ'ուենենանք անդառնալի կորուստներ, որոնց ամբողջ պատասխանատուու–

թիւնը պիտի կրէ Ազգային ժողովի մե– ծամանութիւնը, Հայաստանի կառավա– րութիւնը, անձամբ՝ վարչապետը։

«Ե.».– Բայց ամիսներ առաջ կ'ահագանգէին մասնագէտները, Բա– դախկան ուժերը եւ անյետաձգելի մի– ջոցառումներու առաջարկներ ու հա– մապարփակ ծրագիրներ կը ներկայաց– նէին կառավարութեան։

Յ. Տ. Խ.– Ժիշդ էք։ Բազմաթիւ առաջարկներ՝ ներկայացուած ՀՅԴ–ին, այլ քաղաքական կուսակցութեանց եւ մասնագէտներու կողմէ, իշխանութիւնը պարզապէս անտեսեց, իսկ երբ շարունա– կական պնդումներէ ետք փորձ եղաւ մասնակիօրէն նկատի առնել կամ ալ կի– սատ–պուտ արձագանգել՝ արդէն ուշ էր։ Արդիւնքը եղաւ այն, որ կառավա– րութիւնը ինքզինք զրկեց համաճարա– կին դէմ պայքարին առնչութեամբ մաս– նագիտական աջակցութենէ։ Հակառակ այս մթնոլորտին, ՀՅԴ Բիւրոն համայն հայութիւնը մղեց հասնելու Հայաստանի օժանդակութեան իր շարքերով, մար– միններով, ուղեկից կառոյցներով (ՀՕՄ, ՀՄԸՄ, Համագգային), երիտասարդական եւ ուսանողական միութիւններով առա– ջին օրերէն իսկ անցաւ աշխատանքի, կատարեց առաքումներ ու հաստատեց ծրագրիչներ, այսօր ալ կը յայտնէ իր պատրաստակամութիւնը հասնելու Հա– յաստանի ու Արցախի ժողովուրդին կա– րիքներուն։ Բնականաբար կ'ակնկալէ– ինք, որ, համահայկական պատրաստա– կամութեան պատեհ առիթը օգտագոր– ծելով, համախումբ մթնոլորտով, միաս– նական ճակատով եւ համայն ազգի մի– ջոցներով կարողանանք պայքարիլ հա– մաճարակին դէմ։ Նման համախմբման նախաձեռնողը իշխանութիւնը ի'նք



պէտք էր հանդիսանար՝ խորհրդակցու– թեան հրաւիրելով բոլոր քաղաքական ուժերը, որպէսզի համախոհութեամբ դի– մագրաւուին ճգնաժամին մարտահրա– ւէրները։ Իշխանութիւնը պարտ էր յայտնաբերել քաղաքական կամք՝ ամէն տարակարծութիւն մէկգլի ղեկով բոլորը համախմբելու, միասնական ծրագրիչներ մշակելու եւ զանոնք համախոհութեամբ իրագործելու։ Սակայն, ճգնաժամի այս օրերուն իշխանութիւնը չմնաց իր առա– քելութեան բարձրութեան վրայ։ Իշխա– նութիւնը ոչ միայն ատոր չնախաձեռ– նեց, այլ նոյնիսկ այս իրավիճակին մէջ կատարեց պառակտիչ յայտարարութիւն– ներ ու այլընտրանքային տեսակէտներու հանդէպ անհանդուրժողականութեան դրսեւորումներ ունեցաւ։ Խորհուրդնե– րուն անսալու, օգնութեան համար երկա– րած ձեռքը բռնելու, ձախող բնթացքէն հրաժարելու եւ սեփական սխալները սրբազրելու փոխարէն՝ անընդհատ փոր– ձեց մեղաւորներ փնտռել։ Եւ կրկին ականատես եղանք իշխանութեան կողմէ

գռհչիկ ոճով ներքին թշնամիներ որոնե– լու եւ բաժանարար գիծեր ստեղծելու քաղաքականութեան։ Իսկ վերջին զար– գացումները արդէն կը վկայեն ընդգի– մութիւնը լուեցնելու նպատակով գոր– ծադրուող բռնաճնշումներուն մասին։

«Ե.».– Նկատի ունի՞ք վարչապե– տին Ելոյթի որակումնե՞րը՝ ՀՅԴ–ին մասին։

Յ. Տ. Խ.– Ո՛չ միայն։ Այսօր համա– տարած է իշխանութեան տեսակէտէն տարբերող խօսքի հանդէպ անհանդուր– ժողական վերաբերմունքը։ Իսկ ինչ կը վերաբերի վարչապետի այդ ելոյթին, ապա հոն հնչած արտայայտութիւնները թէ՛ բովանդակութեամբ, թէ՛ ձեւով, թէ՛ օգտագործուած բառապաշարով յարիւր չէին պետութեան առաջնորդին, քաղա– քական ղեկավարին։ Բովանդակային քննադատութեան եւ յստակ առաջարկ– ներուն նման ձեւաչափով պատասխա– նելը ոչ միայն քաղաքական սխալ է, այլ նաեւ լրջագոյն հիմնախնդիրներ դիմա– կայող հասարակութիւնը թուլցնող քայլ։ Անթոյատրելի, անընդունելի, վտանգա–ւոր քայլ։ Ըստ երեւոյթին, վարչապետը չէ հասկեցած կամ ալ դիտմամբ կը թե– րազնահատէ Դաշնակցութեան էութե– թիւնը, ուժը, կամքն ու ոգին։

«Ե.».– Ստեղծուած իրավիճակին մէջ ինչպէ՞ս կը պատկերացնէ՞ք Ելք։

Յ. Տ. Խ.– Նկատի առած ստեղծուած իրավիճակը, առաջնահերթ նպատակը պէտք է ըլլայ ներազգային համերաշ– խութեամբ ճգնաժամի յաղթահարումը եւ ազգային ուղեգիծին համապատասխան երկրի անվտանգ զարգացման ապահո– վումը։ Իսկ այս բոլորը կ'ենթադրէ նոր որակի իշխանութեան ձեւաւորում։

ԱԱԾ-ն Խուզարկեց Գազիկ Ծառուկեանի Տունը. ԲՀԿ-ի Պատգամաւորներն Ու Աջակիցները Բողոքի Ցոյց Կատարեցին

Կիրակի, 14 յունիսի առաւօտեան Ազգային անվտանգութեան ծառայութիւնը (ԱԱԾ) խուզարկեց Գազիկ Ծառուկեանի Առինջի մէջ գտնուող առանձնատունը։ Այ– նուհետեւ Գազիկ Ծառուկեան իր տան դիմաց հաւաքուածներուն յայտարարեց, թէ իրեն նկատմամբ քաղաքական ճնշման փորձ կը կատարուի, եւ որ «ամէն ինչ սարքած է»՝ աւելցնելով, որ ինք կ'երթայ հարցաքննութեան։

ԱԱԾ-ի շէնքին դիմաց հաւաքուեցան Բարդաւաճ Հայաստան կուսակցութեան (ԲՀԿ) խմբակցութեան պատգամաւորները, ինչպէս նաեւ խումբ մը քաղաքացիներ, որոնք ներկայացան իբրեւ կուսակցութեան առաջնորդ Գազիկ Ծառուկեանի աջակից– ներ։

ԱԱԾ-ին դիմաց հաւաքուած ԲՀԿ-ական պատգամաւորները, յատկապէս Շաքէ Իսայեանը յայտարարեց, թէ իրենք ունին ներքին տեղեկութիւններ, որ Գազիկ Ծա–ռուկեանը պիտի ձերբակալեն, իսկ Ազգային ժողովին մէջ անոր անձեռնմխելիութենէ զրկելու միջնորդութիւն պիտի ներկայացուի։ ԲՀԿ-ականները շարունակեցին պնդել, թէ եղածը քաղաքական հետապնդում է։

Աւելի ուշ Ազգային անվտանգութեան ծառայութիւնը 2 հաղորդագրութիւննե–րով հանդէս եկաւ՝ տեղեկացնելով Ծառուկեանի ընտանիքին պատկանող «Շանկրի Լա» եւ «Օնիրա Քլապ» ընկերութիւններու ապօրինի գործունէութեան մասին։ Այդ հաղորդագրութեան համաձայն, ապօրինի գործունէութեան իբրեւ հետեւանք պետու–թեան պատճառ դարձած է աւելի քան 29 միլիառ դրամի վնաս։ Միւս հաղորդագրու–թեամբ, ըստ ԱԱԾ-ի, բացայայտուած են ԲՀԿ անդամներու կողմէ ընտրողները կա–շառելու հարիւրաւոր դէպքեր։

Ոստիկանները անընդհատ յորդորեցին ցուցարարները՝ պահպանելու ընկերային հեռաւորութիւն, սակայն ընթացքին բախումներ տեղի ունեցան, եւ ոստիկանները բերման ենթարկեցին քաղաքացիներ։

www.horizonweekly.ca

վեմ Համահայկական Հանդես

«վեմ»-ի գլխավոր անդամներն էլ լինելու գիտական աւարտականություն ու չընտրություններ, միայն չընտրություններ անող չընտրություններ՝ համարած, որ անգամ ամենազատ չընտրությունը անելն օգտակար է, քան ուրեքսն ու շարքառապար օտարը։

www.vemjournal.org

Իշխան Սաղաթելեան. «Պիտի Պաքարինք Թէ՛ Քաղաքական, Թէ՛ Իրական «Քորոնա» Ժահրը Տարածողներուն Դէմ»

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեան՝ պատասխանելով Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի կողմէ Դաշնակցութեան հասցէին եղած արտայայտութիւններուն, ըսաւ.

«Յաւօք, ստիպուած ենք արձանագրելու, որ քանի՛ երրորդ անգամն ըլլալով, ի պատասխան քաղաքական խօսքի եւ հարցադրումներու, Նիկոլ Փաշինեանի կողմէ կը հնչեն փողոցային բառապաշարով գնահատականներ եւ արտայայտութիւններ։

«Այո», Դաշնակցութեան մօտեցումներուն եւ սկզբունքներուն մէջ բան չէ փոխուած։

«Մենք պիտի շարունակենք պայքարիլ թէ՛ քաղաքական, թէ՛ իրական «Քորոնա» ժահրը տարածողներուն դէմ։

«Ինչ կը վերաբերի քաղաքական աղբանոցին մէջ յայտնուելուն, ապա ական– յայտ է, որ այս հարցին մէջ խորապէս մտահոգուելու պատճառ ունի օրուան իշխա– նութիւնը»։

Միւս կողմէ, ընդգիմադիր դաշտին մէջ տեղի ունեցող գործընթացներուն եւ ընդգիմութեան հաւանական համախմբման մասին «Երկիր»–ին հետ ունեցած կարճ զրոյցի մը ընթացքին Իշխան Սաղաթէլեան յայտնեց, որ երկրին մէջ կացութիւնը իս–կապէս տագնապալի է։ «Իշխանութիւնը ձախողած է բոլոր ուղղութիւններով։ Անիկա կը շարունակէ չընկալել ստեղծուած ճգնաժամը՝ իր ամբողջ խորութեամբ եւ սրու– թեամբ։ Անընդունելի եւ դատապարտելի է նաեւ հնչող քաղաքական հարցադրում– ներուն վերաբերեալ իշխանութեան ցուցաբերած վարքագիծը։ Քաղաքական հակա– դարձութիւնները կ'արժանանան հիւանդագին արձագանգի, որոնք կ'արտայայտուին քրէական գործեր յարուցելու սպառնալիքով եւ հետապնդման ձեւերով քաղաքական ընդգիմութիւնը լուեցնելու փորձերով», ըսաւ ան։

Ըստ անոր՝ այս իրավիճակին մէջ համախմբումը այլընտրանք չունի։ «Սակայն իրական համախմբումը կրնայ տեղի ունենալ միայն յստակ օրակարգի շուրջ։ Մեր համոզումով, այդպիսի օրակարգ պէտք է միտուած ըլլայ ճգնաժամը յաղթահարելուն եւ երկիրը զարգացման ազգային– պետական ուղեգիծ տեղափոխելուն։ Այսպիսի օրակարգի առջեւ մղումը կը պահանջէ ձեւաւորել լայն համախոհութեամբ նախա– ձեռնող խումբի, որուն հիմնական ընելիքը պէտք է ըլլայ օրակարգի շուրջ ժողովր– դական լայն աջակցութիւն ապահովելը։ Վերջապէս՝ իշխանութեան ձեւաւորման եւ զայն փոխելու միակ իրաւատէրը ժողովուրդն է», շեշտեց Սաղաթէլեան։

Նշենք, որ Յունիս 10–ի կառավարութեան պարէտատան նիստէն ետք վարչա– պետ Նիկոլ Փաշինեան մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտարած էր, որ «Դաշնակ– ցութեան ներկայացուցիչները նոյն հռետորականով՝ կառավարութեան հրաժարականի ենթատեքստով խօսում էին 2018 թուականի ամրանը, երբ կառավարութեան ձեւաւո– րումից մէկ–երկու ամիս էր անցել։ Այնպիսի տպաւորութիւն է, որ Հայաստանում ո'չ

իշխան... Ծար. էջ 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՈՒ ԿԵՈՋ ԵՆՐԳՐԱԽՈՒՄԸ

20–րդ դարու սկիզբը աշխարհի մէջ կանանց իրաւունքներու համար պայքարը արդէն վերածուած էր յստակ շարժումի, բայց Հարաւային Կովկասի մէջ կերտուած փոքրիկ հանրապետութիւն մը պատմութենէն քայլ մը առաջ անցած էր:

28 Մայիս 1918–ին, Ռուսական Կայսրութեան մոխիրներէն Արեւելեան Հայաստանի մէջ ծնունդ առաւ Հայաստանի Հանրապետութիւնը: 21 եւ 23 Յունիս 1919–ին տեղի ունեցան խորհրդարանական առաջին ընտրութիւնները. 20 տարիքը ամբողջացուցած իւրաքանչիւր քաղաքացի՝ անկախ սեռէն, կրօնական ու ազգային պատկանելիութենէն, իրաւունք ունէր մասնակցելու ընտրութիւններուն:

Պետութեան կառավարման համար պատասխանատու օրէնսդիր մարմինի 80 անդամներէն երեքը կին էին՝ Կատարինէ Չալեան–Մանուկեան, Պերճուհի Պարտիզպանեան–Բարսեղեան, Վառվառա Սահակեան: Անոնք բոլորն ալ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան անդամ էին:

Այս կանանց մասին տեղեկութիւնները քիչ են, իսկ քաղաքական կեանքը կարճատեւ՝ Հայաստանի առաջին Հանաւրապետութեան պէս: Դեկտեմբեր 1920–ին պոլշեիկներուն ներխուժումէն ետք Հայաստան խորհրդայնացաւ՝ մինչեւ 1991 մնալով Խորհրդային Միութեան կազմին մէջ: ԽՍՀՄ փլուզումէն յետոյ ձեւաւորուեցաւ Հայաստանի երրորդ Հանրապետութիւնը:

Այնուամենայնիւ, Առաջին Հանրապետութեան կենսունակ երկու տարիները կ'արտացոլեն կանանց իրաւունքներու եւ քաղաքական մասնակցութեան զգալի աւանդը:

Ռուսական Կայսրութեան տարիներուն թէ՛ Հայ տղամարդիկ, թէ՛ կանայք իշխանութիւն չունէին կանանց ընտրական իրաւունքին համար քայլերու ձեռնարկելու: Առաջին Հանրապետութեան ձեւաւորման օրերուն, սակայն, տղամարդիկ էին, որոնք փոփոխութիւններ առաջարկեցին:

«Այս տղամարդիկ իրենց կրթութիւնը ստացած էին արտասահմանի մէջ, ակնաստես եղած էին կանանց հզօր շարժումներուն», կը յայտնէ Լիլիթ Զաքարեան, «Տղամարդիկ բարձրացուցին կանանց մասնակցութեան հարցը, քանի որ կը հասկնային, որ կանայք մեծ դերակատարութիւն կրնան ունենալ ազգապահպանման աշխատանքին մէջ»:

Հետեւաբար, ըստ բանասիրական գիտութիւններու թեկնածու Անահիտ Յարութիւնեանի, ի տարբերութիւն արեւմտեան շատ մը երկիրներու, Հայաստանի մէջ կանանց իրաւունքներուն համար պայքար չձաւալեցաւ:

Այսպէս, 1919 Մարտ ամսուն կայացած խորհրդարանական Ա. ընտրութիւններուն ընտրուեցան 3 կին պատգամաւորներ. անոնք են.

Ա.– Կատարինէ Չալեան–Մանուկեան

Բժշկուհի, 1917–ին ամուսնացած էր Հայաստանի Ա. Հանրապետութեան հիմնադիր Արամ Մանուկեանի հետ: Սակայն երբ Արամ մահացաւ, ան լծուեցաւ որբերու եւ գաղթականներու օգնութեան գործին: Ունէր դուստր մը՝ Սեդա անուանով:

Կատարինէն գործեց նոյնիսկ Հա–



Չախէն աջ՝ Կատարինէ Չալեան–Մանուկեան, Պերճուհի Պարտիզպանեան–Բարսեղեան, Վառվառա Սահակեան

յաստանի խորհրդայնացումէն ետք, 1927–էն մինչեւ 1965, որպէս բժշկուհի:

Բ.– Պերճուհի Պարտիզպանեան–Բարսեղեան

Ծնած է 1886 թուականին, Էտրինէ. 16 տարեկանին եռանդով լեցուն եւ հայրենիքի ծառայելու գաղափարով ներշնչուած՝ խմբակ մը կազմեց լուսաւորութիւն տարածելու նպատակով: Ուսանած է գրականութիւն եւ մանկավարժութիւն. իր պատմութեանքները «Էտնա» ծածկանունով լոյս կը տեսնէն: Ուսուցչութեամբ կը զբաղէր Վանի մէջ: 1915–ին ամուսինը՝ Սարգիս Բարսեղեան, ձերբակալուեցաւ եւ նահատակուեցաւ: Հետագային ան կեանքը նուիրեց գաւկիին եւ հայութեան ծառայելու: Տեղափոխուած է Պուլկարիա, ետքը Թիֆլիս, իսկ Հայաստանի Ա. Հանրապետութեան հռչակումէն ետք անցած է Երեւան եւ ընտրուած՝ խորհրդարանի պատգամաւոր: Իր պաշտօնէն էր՝ ծառայել Ամերիկեան խնամատարութեան կոմիտէին մէջ:

Հանրապետութեան անկումէն ետք գաղթեց Սոֆիա եւ ետքը՝ Փարիզ, ուր պաշտօնավարեց Նանսէնեան գրասենեակին մէջ եւ զբաղեցաւ գրականութեամբ, մինչեւ իր մահը՝ 1940:

Գ.– Վառվառա Սահակեան

Ծանչցուած է Վարիա անունով: Ան կինն էր Աւետիք Սահակեանի (Հայր Աբրահամ): Դարձեալ Ա. Հանրապետութեան օրերուն ընտրուած էր խորհրդարանի պատգամաւոր: Զբաղած է կրթական ծրագրերներով: Այդ շրջանին, կորսնցնելով իր զաւակը՝ դեղորայքի չգոյութեան պատճառով Հայաստանի խորհրդայնացումէն ետք, Վարիան ընտանեօք անցաւ Թաւրիզ, ետքը Իրաք, սակայն կլիմայի անյարմարութեան պատճառով տեղափոխուեցաւ Լիբանան, ուր ան դարձեալ զբաղեցաւ հասարակական գործունէութեամբ եւ մասնակցեցաւ Օգնութեան Խաչի կազմակերպչական աշխատանքներուն, սակայն առողջութիւնը վատթարացաւ գաւկիին եւ ամուսնոյն մահէն ետք եւ շատ չանցած՝ կնքեց իր մահկանացուն:

Հայաստանի Ա. Հանրապետութեան պատուաւոր դեսպան եւ արդի պատմութեան մէջ առաջին կին դիւանագէտը եղած է Տիանա Աղաբէկ Աբգարը: Ան Ճափոնի դեսպանն էր 1920–ին եւ Նոքոհամայի պատուաւոր հիւպատոս. ծնած է Պրիմա (Միանմա), նորջուղայեցի հայ ընտանիքի մէջ եւ դպրոց յաճախած

է Հնդկաստանի մէջ: 1890–ին ան ամուսնոյն հետ տեղափոխուած էր Ճափոն: 1909–ին Ատանայի մէջ պատահած ջարդերը զայն մղեցին աշխատանքի, եւ կեանքին մնացեալ մասը ան նուիրեց հայերու ազգապահպանման գործին. նոյնիսկ Ճափոնի մէջ ան ապաստանաւան հիմնած է Հայոց Յեղասպանութենէն փրկուած եւ ազատած որբերու եւ այրիներու համար: Իր այս ջանքերը մեծ գնահատանքի արժանացան, եւ այդ պատճառով նշանակուեցաւ Ճափոնի դեսպան:

Ան ունեցած է գրական մեծ արժանիքներ, գիրքեր՝ իր հայրենիքի մասին, ուր բնաւ չէ այցելած. իր գրութիւններուն մէջ անդրադարձած է հայ ազգին ապրած անարդարութիւններուն եւ դժբախտութիւններուն:

Տիանա Աբգար յաճախ ինտոնեզիոյ հայ գաղութին կը դիմէր՝ ոչ միայն կարիքաւոր հայրենակիցներուն օգնութեան հասնելու, այլեւ հայրենիքի մշակութային եւ կրթական աշխատանքներուն նպաստելու համար: Յատկապէս Ճաքարթայի Հայ Կիներու Բարեգործական Միութիւնը մեծ հանգանակութիւններ կը կազմակերպէր հայրենիքի մեծաթիւ գաղթականներուն եւ որբերուն օգնութիւն հասցնելու համար:

Մէկ խօսքով, Տիանա Աբգար Ճափոնի մէջ վայելած է պետական դէմքերու եւ հայ գաղութին համակրանքը եւ կոչուած է «Նոքոհամայի Մայրիկը»:

Նաեւ կը յիշատակուի պատմութեան մէջ Դանիոյ մէջ հայ կին դեսպան ունեցած ըլլալու իրողութիւնը:

Որբերու խնամատարական աշխատանքները կազմակերպելու տեսակէտէն, Հռիփսիմէ (Լոլա) Մեծատուրեան–Սասունին իր կարեւոր ներդրումը ունեցած է Հայաստանի Ա. Հանրապետութեան Կարմիր Խաչի հիմնադրութեան մէջ: Այս կազմակերպութիւնը վերաւորներն ու հիւանդները կը խնամէր եւ որբանոցներուն ու տարագիր ընտանիքներու կարիքները կը հոգար. օրինակ՝ 1919–ին ձմրան քարիւղ ապահովեց եւ պարէն հայթայթեց անոնց, իսկ 1920–ին Փարիզի Ազգային պատուիրակութիւնը Կիլիկիոյ որբանոցներուն վերահսկիչ նշանակեց գրագիտուհի եւ ազգային ծառայութեան նուիրեալ Զապէլ Եսայեանը: Մեծանուն հայուհին դիւանագիտական հետեւողական աշխատանքով ջանաց ազգային ինքնավար օճախը իրականութիւն դարձնել (foyer): Միւս կողմէ՝ եռանդ սպառեց Կիլիկիոյ հայութեան թրքախօսութեան սովորութիւնը ջնջելու եւ գոնէ Ատանայի կարեւոր որբանոցը

ՀԲԸՄ–ի հակակշիռին տակ կրցաւ գետեղել:

Ինչպէս չյիշենք կոմսուհի Մարիամ Թումանեանը, որ ծնած է Շուշի, 1870–ին, դուստրը՝ դատախազ Մարկոս Տոլուխանեանի եւ Թիֆլիսցի մօր. Մարիամ զարգացած էր եւ եւրոպական լեզուներ իւրացուցած՝ անգլերէն, գերմաներէն: Դիլիջանի մէջ հիմնեց որբանոց մը, ուրկէ փոքրերը Թիֆլիս կ'ուղարկէր՝ ուսում ստանալու:

Հայաստանի Ա. Հանրապետութեան շրջանին հայ կնոջ պայքարը եւ իրագործումները, ազգային բարեկարգում յառաջացնելու հանգամանքը ոչ միայն հպարտութիւն կը ներշնչեն, այլեւ ապագայի հանդէպ վստահութիւն՝ համարձակութեամբ դիմագրաւելու մարտահրաէյները, որոնք անթիւ են, գլխաւորաբար յիշելով՝ մայր լեզուի նահանջը, օտար եւ խառն ամուսնութիւններու յաճախականութիւնը, մշակոյթի եւ ինքնութեան կորուստը եւ ընկերաբարոյական վիճակի անկումը: Այս հարցերը լուծելու մէջ մեծ դերակատարութիւն կը ներշնչեն սփիւռքի եւ հայրենիքի միասնական, հաւաքական աշխատանքը եւ հայ կնոջ դրական ներդրումը: Վերջապէս, հայ կինը միայն մարդկային համարանք արտադրող գործիչ չէ, այլ համալիր՝ ամբողջական ծրագրի իրականացման համար, իրահաւասար քաղաքացի:

«Այսօր յետընթաց կ'արձանագրենք սակայն: Որոշումներ գոյացնող կանայք քիչ են», կը նշէ Անահիտ Յարութիւնեան, «Իսկ ինչո՞ւ: Որովհետեւ Հայաստանի մէջ կանայք չեն անցած ֆեմինիզմի թոհոբոհով ու չեն սորված իրենց իրաւունքներուն համար պայքարիլ: Հիմա կանայք որոշում գոյացնելու համար կը դառնան կուսակցական, բայց կրաւորական վիճակի մէջ կը յայտնուին», աւելցուցած է ան:

«Ծառուկեան» դաշինքի անդամ Նայիրա Զուրապեան կը գրէ. «Դժբախտաբար Հայաստանի մէջ խաղի կանոնները թոյլ չեն տար կանանց մրցունակ ըլլալու քաղաքականութեան մէջ, անկախ անկէ, ձեւաւորուած է նաեւ նախապաշարում մը, որուն համաձայն, քաղաքականութիւնը կնոջ գործը չէ, կամ քաղաքականութեամբ կը զբաղին կանացիութենէ զուրկ կանայք»:

1919 թուականին, մասնակցելով ընտրութիւններուն, Հայաստանի առաջին երեք կին պատգամաւորները այդ նախապաշարումը կոտրելու հիմքը դրած էին բարեբախտաբար:

«Գանձասար»



Յոյս Գերարկե՞ք Լիբանանահայութեան

«Մեծագոյն սէրը այն սէրն է, որով մարդ ինքզինք կը զոհէ իր ընկերներուն համար»
(Յովհաննէս 15.13)

Անցնող կիսադարուն, պատե-
րազմներու եւ ներքաղաքական առճա-
կատումներու դժուար բովէն անցած Լի-
բանանը, այսօր դէմ յանդիման կը
գտնուի մարդասիրական ահաւոր ճգնա-
ժամի: Երկրի տնտեսական համակարգը
կաթուածահար է, համավարակը անդա-
մալուծած է երկիրը, ժողովուրդը աղքա-
տութեան անդունդի եզրին է:

Օրըստօրէ յաւելում կրող հազա-
րաւոր դործազուրկ զանգուածներով եւ
աղքատութեան դռները թակող քաղա-
քացիներով, Լիբանանը սնանկացման
եզրին է:

Երկրի ընկերային զարգացման
անհամաչափութեան խորացումը, 2
միլիոն սուրիացի եւ պաղեստինցի կա-
րիքաւոր գաղթականներու ծանր բեռը
եւ սննդամթերքի ծայրահեղ գնաճը
կրնան յանգեցնել պարէնային անա-
պահովութեան ճգնաժամի եւ համատա-
րած թերսնուցման:

Լիբանանի տնտեսութեան նախա-
րարի խոստովանութեամբ, մինչ տարե-
վերջ, բնակչութեան 60 տոկոսը ամե-
նայն հաւանականութեամբ կրնայ թե-
ւակորեկ աղքատութեան շեմը:

Բնակչութեան եկամուտներու
կտրուկ անկումը, աննախադէպ սղաճն
ու չքաւորութեան չափանիշային աճը
խոցելի դարձուցած են երկրի ընկերային
ողջ համակարգը:

Մէկ խօսքով՝ լիբանանցի քաղա-
քացին առողջապահական եւ ընկերա-

յին ամենէն տարրական կարիքներու
բաւարարման հնարաւորութիւններէն
զուրկ է այսօր: Տնտեսական եւ ընկե-
րային ներկայ իրավիճակի անկանխա-
տեսելիութիւնը եւս բացասացական իր-
ներգործութիւնը կ'ունենայ ժողովուր-
դի կենսամակարդակի գահավէժ ան-
կումին:

Վերոնշեալ տաճնապի ոլորապտոյ-
տէն անմասն չեն նաեւ Լիբանանի մեր
քոյրերն ու եղբայրները: Այսօր, Լիբա-
նանահայ համայնքին մէջ գոյութիւն
ունի անապահով խաւ, որուն կարիքնե-
րուն միշտ հասած են հայ բարեսիրական
ու ազգային համապատասխան կազմա-
կերպութիւններն ու կառույցները: Ներ-
կայ դրութեամբ, վերոյիշեալ կազմակեր-
պութիւններու մատակարարման աղ-
բւերներն ու միջոցները սպառելու եզրին
են:

Վտանգուած է Լիբանանահայ ըն-
տանիքը: Ընդամասի մէջ են համայնքի
բարօրութեան վերահսկող բարեսիրական
կառույցները:

Ժիշդ է, որ համաշխարհային հա-
մավարակի առթած տնտեսական տագ-
նապի ճիրաններուն մէջ սեղմուած են
Արեւմտեան Սփիւռքի գաղութները եւս,
սակայն պահն է, որ ողջախոհութեամբ
մեր հայեացքները սեւեռենք աւելի անն-
պաստ կացութեան մէջ գտնուող հայրե-
նակիցներուն օգնելու նպատակին

Առաջին հերթին, Արեւմտեան աշ-
խարհի Սփիւռքի լիբանանահայերը

պէտք է անսան օգնութեան կանչին:
Եւրոպայի, Հիւսիսային Ամերիկայի կամ
Աւստրալիոյ մէջ ապրող բոլոր լիբանա-
նահայերու յիշողութեան մէջ պայծառ
են այն եղբայրական մարդասիրական
դրուագները, երբ Լիբանանի քաղաքաց-
իական պատերազմի օրերուն, Պուրճ Հա-
մուտի հայութիւնը ձեռք կ'երկարէր Ան-
թիլիասին կամ փոխադարձաբար: Ինչ-
պէս Այնճարի հայութիւնը, իր դռները
լայն բանալով իր գրկին մէջ կ'առնէր
պատերազմի պատճառով տուժած բազ-
մահազար անպատասպար հայրենակիցներ
եւ թէ ինչպէս ամբողջ համայնքը ինք-
նատիրութիւն կը կատարէր՝ տէր կանգ-
նելով իր եղբոր եւ քրոջ: Այդ եղբայրա-
սիրութիւնը իր արգասիքը պէտք է ունե-
նայ նաեւ այսօր: Պարտական ենք մա-
նաւանդ քաղաքացիական պատերազմի
ընթացքին հայութեան ապահովութիւնը
երաշխաւորած նահատակ տղոց պահա-
կագունդին:

Ժամն է ողջախոհութեամբ պահ-
ուան կշռադատումը կատարելու եւ մեր
խիղճները լուսաւորելու: Պահն է անդրա-
դառնալու, որ մեր իրավիճակէն աւելի
վատթար կացութեան մէջ գտնուողնե-
րուն մտայլ օրը պայծառացնելու ժամա-
նակն է: Անկեալ ընկերող օգնելը՝ մարդ-
կային վսեմ առաքինութիւն է:

Եղբայրութեան եւ ընկերութեան
մասին հայ գրականութեան ռահվիրայ
բանաստեղծ Պարոյր Սեւակի տողերը
ինքնաբացատրական են.

**Ես - եղբայրդ՝ տուայտանով
քո հոգու,
Ես - ընկերդ՝ սրտիդ զարկով
բարխոդ,
Հարագատդ փարուած կրծքիդ
սրախող,
Մի վառ յոյսով խոր վերքերդ
եմ ամոռում:**

Իւրաքանչիւրս բոլլ մը յուշ ունի
Լիբանանէն: Իւրաքանչիւրս տակաւին
սրտամօտ հարազատ, ընկեր ու բարեկամ
ունի հոն: Պահն է որ մեր սրտերէն յոյսի
ճառագայթներ ներարկենք Մայրիներու
երկրի մեր հարազատներուն:

Օրեր առաջ, Գանատայի մէջ
կեանքի կոչուեցաւ Լիբանանահայու-
թեան օժանդակութեան Գանատայի
մարմինը, որ իր առաքելութիւնը դար-
ձուցած է՝ սատար հանդիսանալ Լիբա-
նանի մեր քոյրերուն եւ եղբայրներուն:

Բոլորիս սրտին խորը անթեղուած է
քրիստոնէաշունչ, մարդկային հոգին
արարող կատարելատիպ այն իտէալը, որ
կը կոչուի՝ օգնել:

Պահն է, որ անմնացորդ, անչա-
հախնդիր եւ անանձնական նուիրումով
միանանք լիբանանահայութեան օժան-
դակութեան առաքելութեան:

Մասնակցի՛նք նուիրահաւաքին:
Հասնի՛նք լիբանանահայութեան:
Յոյսի ճառագայթ ներարկենք լի-
բանանահայութեան:
Վահագն Գարագաշեան

Դեկտեմբեր 9 2019-էն սկսեալ, «Հայ Հորիզոն»
հեռատեսիլի յայտագիրը պիտի սփռուի հետեւեալ
կայաններուն եւ ժամերուն, մէկ ժամուայ տևողութեամբ:

Videotron: HD838 կամ SD238	Երեքշաբթի - 9pm (առաջին սփռում) Չորեքշաբթի - 1:00pm Հինգշաբթի - 6:00pm Շաբաթ - 7:00am
Bell Fibe: HD1216 կամ SD216	Կիրակի - 06:00am, 2:00pm, 1:00am Երկուշաբթի - 06:00am, 5:00pm, 1:00am

Ուղիղ հեռարձակում՝ www.icitelevision.ca

Voyages
HAIG
Travel

Ձեր բոլոր ճամբորդական
Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊՈԶԻՏԱՍԱՆ...
ԼԱԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ
ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

Ghadir Meat & Restaurant

Ghadir
Meat & Restaurant

T. 416-750-7404
T. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com

RE/MAX West Realty Inc., Brokerage
Independently Owned and Operated

Anto Keledjian
Sales Representative
Residential & Commercial

Dir: (416) 930-2686
Bus: (416) 588-6777

570 Bloor St. W., Toronto, ON M5S 1K1

ANTOK13@GMAIL.COM • WWW.TORONTOSOLD.CA

SUQ

2 Champagne Drive # B9
Toronto, ON M3J 2C5
Tel: (416) 661 8998
www.suqkitchen.ca

ANI
Restorante

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

Sutton

Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0

Annie Varbedian
Sales Representative

Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbed@icloud.com
www.suttongroupadmiral.com

Each Office is Independently owned and Operated

hearing aid source

Andre Ayvazyan HIS B.A.S

andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

Gary Chahinian President, Broker of Record
416-258-8892

Gabriel Chahinian Sales Representative
647-580-5818

The Diamond Realty

I.D.A.
Part of the **Shaw** family of pharmacies.

Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

Cassandra Pharmacy Inc.
2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2

Tel. : **416.449.2040**
Fax: **416.449.2048**

ANI BAKERY
ԱՆԻ ՓՈԱՊԱՆ

Middle Eastern Pizza Lahmajoun

ARSEN DABBAGHIAN

25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8

Tel: 416.285.7164

Հայաստան - ՀՅԴ - Սփիւռք (Դաշնակցութիւնը ՀՀ Կառավարութեան Մասնակից)

Հայ–թրքական փրոթոքողներու նախնական ստո–րագրութեան պատճառով կառավարութեանէն իր հրա–ժարումէն ետք Դաշնակցութիւնը դեր ունեցաւ ընդդի–մադիր ուժերու համախմբումի մը՝ քառեակի (ԲՀԿ, Ժա–ռանգութիւն, ՀԱԿ եւ ՀՅԴ) կազմաւորման մէջ։

Գաղափարական ու քաղաքական նպատակներու հասարակաց գետին չունեցող այս կուսակցութիւններու համախմբումի անդամները, բնական է, իրարու կապ–ուած էին համեմատաբար դիւրաբեկ թեկերով․ անոնք պարտաւոր էին իրենց որոշումներուն յանգիլ միաձայ–նութեամբ, ինչ որ կը սահմանափակէր անոնց գործու–նէութեան դաշտը։

Դաշնակցութեան համար Հայաստանի քաղաքա–կան կեանքի արդիականացումն ու անոր՝ ներկայ ժա–մանակներու մէջ տեղադրումը կը մնար կուսակցու–թեան տակաւին չիրականացած գլխաւոր ծրագիրներէն մէկը։ Հանրապետութեան վերանկախացման առաջին օրերէն արդէն Դաշնակցութիւնը կը հետապնդէր խորհրդարանական վարչակարգի որդեգրումը՝ իբրեւ ժողովրդավարութիւնը կարելի դարձնող եւ զարգացած երկիրներու մէջ գործող լաւագոյն օրինակը, սակայն ընդդիմադիր քառեակի գործընկերները խանդավառ չէին այդպիսի հեռանկարով։

Ահա այս հարցով է, որ իշխանութեան դեկին գտնուող ՀՀԿի եւ նախագահ Սերժ Սարգսեանի հետ Դաշնակցութեան կապերը վերստին սերտացան, մանա–ւանդ որ հայ–թրքական համաձայնագրերու ճակատա–գիրը արդէն կնքուած կը թուէր ըլլալ․ յստակ դարձած էր արդէն, որ թրքական կողմն ալ խանդավառ չէր անոնց գործնականացման՝ ազդպէյճանական կողմի ճնշումներուն գոհացում տալով։ Հետապնդուող սահ–մանադրական այս փոփոխութեան առնչութեամբ, ան–շուշտ, միտքերուն մէջ կար այն կասկածը, որ նախա–գահը անձնապէս շահագրդուած կրնար ըլլալ այդպիսի փոփոխութեամբ մը, որովհետեւ իր համար դուռը կը բացուէր այս անգամ իբրեւ վարչապետ իշխանութիւնը իր ձեռքին մէջ պահելու։

Մտահոգութիւնները կարեւոր չափով փարատե–ցան, երբ նախագահը հրապարակաւ յայտարարեց, թէ ինք հետաքրքրուած չէ վարչապետի պաշտօնով։

Այսպէս, Դաշնակցութիւնը կառավարութեան նստարաններէն գրեթէ ութնամեայ բացակայութենէ մը ետք վերստանձնեց իր ատենին կամաւոր ու հիմնաւոր կերպով թողած կառավարական պատասխանատուու–թիւնները։ Կառավարական ընթացիկ գործերը տարուե–ցան, սահմանադրութիւնը պատրաստուեցաւ, ան հան–րաքուէով ընդունուեցաւ, նախագահ Սերժ Սարգսեան իր նախագահական պաշտօնի աւարտէն անմիջապէս առաջ Ազգային ժողովէն յետ կանչեց հայ–թրքական փրոթոքողները եւ վերջապէս, մոռնալով ատենին իր տուած խոստումը, ընդունեց ՀՀ վարչապետ դառնալու՝ իր կուսակցութենէն եկած առաջարկը։

Շարունակութիւնը բոլորին յայտնի է։ Շրջանա–ւարտ նախագահի իշխանական նոր գերագոյն պաշտօ–նի՝ վարչապետի պաշտօնի ստանձնումը պատճառ դար–ձաւ երկու նախագահական լման չրջաններու ընթաց–քին քաղաքական դժգոհ չրջանակներու գործօն զարթ–նումին, որ վաշիեց նաեւ ժողովրդային իրաւամբ յու–սախար ստուար զանգուածի մը համակրանքը, զօրա–վիգն ու մասնակցութիւնը։

Այստեղ միջանկեալ թող ըսուի, որ Դաշնակցու–թեան գործունէութեան այս հանգրուանի աւարտէն անմիջապէս առաջ տեղի ունեցաւ իրադարձութիւն մը, որուն հարկ եղած կարեւորութիւնը չտրուեցաւ ատենին, որովհետեւ մարդիկ աւելի կեցրոնացան ձեւական ման–րամասնութիւններուն, քան խորքային իմաստին վրայ։ Ատիկա ցեղասպանութեան յաջորդած հայկական պե–տութեան հիմնադրութիւնը խորհրդանշող, այդ օրերու կենաց–մահու պայքարի փաստացի առաջնորդ Արամ Մա–նուկեանի արձանի բարձրացումն էր հանրապետու–թեան կառավարական կեդրոնական հրապարակի անմի–ջական հարեւանութեամբ։

Այսպէս, հայկական պետականութեան վերած–նունդէն դար մը ետք երկու զուգահեռ փողոցներու միջեւ գտնուող պուրակի երկու ծայրերը այսօր կան մէկ կողմէն՝ Լեռնահայաստանի ազատարար Գարեգին Նժդեհի արձանը, միւս կողմէն՝ մայրաքաղաք Երեւանի փրկարար եւ հանրապետութեան կերտիչ Արամ Մա–նուկեանի արձանը։ Մարդոց յիշողութեան մէջ տեղ գրաւած են, անշուշտ, այդ օրերուն դեռ նորընծայ իշ–խանութիւններու մասնակից կարգ մը տարրերու ճիգե–րը՝ անհիմն պատրուակներով խափանելու Ա. Մանուկ–եանի արդէն պատրաստ արձանի տեղադրումը․ խա–

փանման փորձերը ձախողութեան մատնուեցան։ Զոյգ արձանները, այսօր իրենց ներկայութեամբ ամէն օր տե–ւաբար ընդգծելով հանրապետութեան հիմնադրութեան օրերու ոգին, անոր արթուն պահակն են միաժամանակ։

Դուրսէն դիտողը կը նկատէ, անշուշտ, որ Խորհր–դային Միութեան ինքնահաշուեյարդարէն միայն 27 տարիներ ետք ազատ մթնոլորտի մէջ կառուցուեցաւ հանրապետութեան անցեալն ու ներկան իրարու զօդող այն սկզբնական ամուր յենակէտը, որ երաշխիքն է հայ ժողովուրդի, հասարակութեան եւ ազգի՝ իբրեւ ուրոյն ու ամբողջական միաւոր զարգանալու եւ յարատեւելու կամքի առարկայական իրականացման։

Արամ Մանուկեանի յուշարձանի տեղադրումով սկսած ընթացքը պէտք է իր ծրագրուած շարունակու–թիւնը ունենայ։ Համահայկական հասարակութիւն կազմաւորող այս գործադաշտը դժբախտաբար յատ–կանշուած է գլխաւորաբար իր արտասովոր դանդաղու–թեամբ։

Դաշնակցութեան, թերեւս միաժամանակ նաեւ այլ ուժերու ճիգերով տեղին միջնորդութիւններով յեղափո–խութիւնը մտցուեցաւ սահմանադրական անարիւն հու–նի մէջ։ Մագոգային խորհրդակցութիւններով առաջքը առնուեցաւ աննախատեսելի հետեւանքներով պատ–րաստուող փողոցային բախումներուն։

Վարչապետ Սերժ Սարգսեան պատրաստակամու–թիւն յայտնեց իր պաշտօնէն հրաժարելու։ Շարժման ձերբակալուած առաջնորդը ազատ արձակուեցաւ։ Հանրապետութեան հրապարակ հաւաքուած ցուցարար–ներուն հարցնելով՝ անոնց դեկավար, դուխազլխարկ կրող Նիկոլ Փաշինեան ստացաւ իր ակնկալած պատաս–խանը․ ինք պիտի դառնար ՀՀ վարչապետը՝ կամօքն հրապարակը հաւաքուած ժողովուրդին։

Սերժ Սարգսեան յայտարարեց պետական մարդու վաշել հրաժարական մը՝ ընդունելով «իւ սխալը», առանց մանրամասնելու այս խոստովանութեան իմաս–տը։ Յայտարարութիւնը կը պարունակէր նաեւ որոշ առեղծուածային եզրեր, որոնց բացատրութիւնը, կ'երե–ւի, պիտի տրուի ապագային։

Լաւ սերտուած սահմանադրական բեմադրու–թեամբ ցուցարարներու աչքին ատելի խորհրդարանը վարչապետ ընտրեց օրուան անդիմադրելի հերոս Նիկոլ Փաշինեանը, որ արդէն համաձայնած էր յաջորդ մէկ տարուան ընթացքին արտահերթ պատգամաւորական ընտրութիւններ կազմակերպելու պայմանին՝ փոփո–խութեան ենթարկելէ ետք գործող ընտրական օրէնքը։

Նորընտիր վարչապետը դիմեց Դաշնակցութեան՝ կառավարութեան մաս կազմելու առաջարկով։

Դաշնակցութիւնն ընդունեց առաջարկը՝ իր զար–մանքը յայտնելով հանդերձ․ անոր վստահուեցան տնտեսութեան եւ գրւղաւտնտեսութեան նախարարու–թիւնները։ Ամիսներ շարունակ կառավարական աշխա–տանքի լրատուութիւնը կը վերաբերէր այս երկու նա–խարարութիւններուն, մնացեալները զբաղած էին յե–ղափոխութեան յաջողութեան կենացնելով եւ ընդհան–րապէս տարուած էին յաղթանակի խանդավառ քարոզ–չութեամբ։

Ինչպէս պարագան եղած էր անցեալին, ամէն ան–գամ, երբ Դաշնակցութիւնը մաս կազմած էր կառավա–րութեան, այս անգամ եւս որոշ չրջանակներու կողմէ ան մեղադրուեցաւ պատեհապաշտութեամբ, ամբաս–տանուեցաւ քանի մը նախարարութիւն ունենալու հա–մար իր իսկ սկզբունքներուն հակադրուելու անհեթեթ զրպարտանքով։

Փակագիծ մը բանալով՝ ըսենք, որ նորանկախ Հայաստանի քաղաքական բեմին վրայ Դաշնակցու–թիւնը երբեք, բառին ամբողջական իմաստով, կառա–վարական ամբողջական պատասխանատուութիւն չէ կրած։ Յաճախ ալ, կառավարութեան մաս կազմելուն հակառակ, հրապարակային կերպով քննադատած է կա–ռավարութեան այս կամ այն որոշումը՝ արժանանալով կառավարական գործընկերներու ափսոսանքին ու բար–կուլթեան, միւս կողմէն՝ ընդդիմութեան դիտողութիւն–ներուն, որոնք կեղծիք կը համարէին Դաշնակցութեան կատարած քննադատութիւնները, սակայն վերջիվերջոյ մարդիկ վարժուեցան Դաշնակցութեան այդ վարքագ–ծին։ Այս գործելաձեւը փոխուեցաւ միայն նախագահ Ս. Սարգսեանի պաշտօնավարութեան վերջին հանգրուա–նին, երբ կուսակցական մարմինները դադրեցուցին առօրեայ քննադատութեան ոճը, սակայն միայն ոճը։ Արդարեւ, կառավարութեան գործունէութիւնը կուսակ–ցական մարմիններու կողմէ սկսաւ քննարկուիլ եռամս–եայ դրութեամբ, իսկ եզրակացութիւնները կը ներկա–յացուէին հանրութեան յատուկ յայտարարութեամբ։ Իր

մասնակցութեամբ կազմուած բոլոր կառավարութիւն–ներուն մէջ Դաշնակցութիւնը պահած է իր ինքնուրոյ–նութիւնը եւ որոշումի անկախութիւնը․ այս հարցով եր–բեք անյաղթահարելի խնդիրներ չունեցաւ իր կառավա–րական գործընկերներուն հետ։

Նոյնը չեղաւ Ն․ Փաշինեանի դեկավարութեամբ կազմուած դահլիճին պարագային։

Ժողովրդավարութեան ու ժողովուրդի անունով իշխանութեան հասած վարչախումբը իր գործունէու–թեան առաջին իսկ օրերուն ցոյց տուաւ այլ կարծիքնե–րու հանդէպ իր անհանդուրժողականութիւնը։ Առաջին բախումին պատճառ դարձաւ դաշնակցական տնտեսա–կան նախարարի՝ հանգստեան թոշակներու առնչու–թեամբ արտայայտած մէկ տեսակէտը։

Խանդավառուած 2018ի սեպտեմբերի սկիզբը տե–ղի ունեցած Երեւանի քաղաքապետի ընտրութիւննե–րուն իր համար բացառիկ դրական արդիւնքէն՝ անկան–խատեսելի վարչապետը սկսաւ պահանջել պատգամա–ւորական արտահերթ ընտրութիւններու յառաջաձգու–մը, բան մը, որ Դաշնակցութիւնը չէր կրնար ընդունիլ, որովհետեւ ժամանակի մթնոլորտին մէջ անոնց ար–դիւնքը դիւրաւ կանխատեսելի էր։

Ընտրեալ վարչապետը կրկին դիմեց խափանարա–րական միջոցներու․ ցուցարարները չրջափակեցին խորհրդարանի շէնքը՝ արգելք հանդիսանալով պատգա–մաւորներու մուտքին, որոնք կանչուած էին խորհրդա–րանի անխափան գործունէութիւնը ապահովող օրէնքի մը խորհրդակցութեան եւ ընդունման համար։ Դաշ–նակցութեան Գերագոյն մարմինը յայտարարեց իր ներ–կայացուցիչներու հրաժարականը կառավարութենէն։

Քանի մը վաշրկեան ետք թատերաբեմի դեր կա–տարող ցոյցի հարթակին վրայ վարչապետը ոտքի վրայ ստորագրեց դաշնակցական նախարարներու դահլիճի անդամակցութենէն դադրեցման հրամանագիրը։

Առաջին անգամը չէր, որ Դաշնակցութիւնը բոլո–րովին ինքնակամ կը հրաժարէր կառավարութենէն, ինչ որ գոնէ պարկեշտ մեկնաբաններու աչքին կը հաստա–տէ, թէ կուսակցութեան համար նախարարական աթոռ–ները ինքնին նպատակ չեն, այլ տաժանակիր շինարար աշխատանքի առիթ ընծայող միջոցներ։ Այլ՝ իմ ական–ջի՛ս ալ հասած տեսակէտներ կը պատկանին կասկածելի աղբիւրներէ հոսող եւ մեր իրականութեան մթնոլորտը թունաւորող բամբասանքային ոլորտին, որուն համար, ընկերային ցանցերուն վրայ մանաւանդ, ժամանակ յատկացնողները դժբախտաբար բազմացած են։

Սփիւռքը առհասարակ դրական վերաբերում ու–նեցաւ ՀՀէն ներս կատարուած փոփոխութիւններուն հանդէպ։ Ասիկա զարմանալի չէ, որովհետեւ անկախու–թենէն ի վեր չեփորահար քարոզչութիւն տարուած էր երկրէն ներս մերկ աչքով տեսանելի որոշ երեւոյթներու դէմ՝ փտածութիւն, կիներու իրաւունքներու հարց, նե–րընտանեկան բռնութիւն եւ այլն։ Շատերու նպատակը, վստահաբար, այդ յոռի երեւոյթները առողջ քննադա–տութեամբ օր մը սրբագրուած տեսնելն էր, սակայն լրատուական միջոցներու սովորութիւնն է ամէն ինչ խոշորացոյցով դիտելով ողբերգական ծայրայեղ ու չա–փազանցուած վիճակ մը վկայելը, որ միայն մասնակիօ–րէն կը ներկայացնէ իրականութիւնը, նաեւ ընթերցող–ներուն ընկալումը առհասարակ նկատի չ'ունենար աշ–խարհադրութեամբ պայմանաւորուած բարքերու յա–ճախ խորունկ տարբերութիւնները։ Այս ձեւով վիճակ բարելաւելու սկզբնական դրական նպատակին համար տարուած աշխատանքը կու տայ ճիշդ հակառակ ար–դիւնքը։ Բացառելու չէ նաեւ այն, որ կարգ մը չրջա–նակներ ի սկզբանէ հետապնդած ըլլան աշխարհաքա–ղաքական նպատակներ՝ շահագործելով ժողովրդային ըմբռնելի դժգոհութիւնը։

Յամենայնդէպս, ներկայ հանգրուանին օրէ օր ու շաբաթէ շաբաթ հիասթափութեան աստիճանը կը բարձրանայ, դժգոհներու թիւը կ'աւելնայ։ Այսպէս, 2018ի հոկտեմբեր 2ին վարչապետին՝ խորհրդարանը չըրափակելու կոչին ընդառաջեցին տասնեակ հազարա–ւորներ, իսկ շուրջ եօթ ամիս ետք դատարանները փա–կելու անոր կոչին՝ միայն իշխանամէտ պատգամաւոր–ներ, պետական պաշտօնեաներ, փոքրաթիւ համակիր–ներ։

Ժամանակի ընթացքին հիասթափութեան ալիքը հասաւ մինչեւ Սփիւռքի ամենէն հեռււոր անկիւննե–րը։

Մկրտիչ Մկրտիչեան «Դրօշակ», թիւ 6 (1640), Յունիս, 2020

Canadian Committee for the relief of Armenians in Lebanon

COMMUNIQUE # 1

Dear compatriots,

The Armenian community in Lebanon is facing a major crisis due to the general financial distress of the country and the Corona-virus pandemic. The institutions and organizations of the community are fully engaged and the community in general is going through its direst phase.

The A.R.F. Central Committee of Canada launched a special appeal to the community and declared about the creation of this committee. We started our duties immediately, our mission being the support of our brothers and sisters in Lebanon without a minute to waste.

On May 28th, we launched our fundraising campaign. Throughout the many online events held in our regions, you will hear our appeal. The Armenian community of Canada has always conveyed its wholehearted and generous support to wherever the call for help has originated, from Armenia to any corner of the vast Armenian diaspora. We are confident that, once again, we are going to support the Armenian community of Lebanon.

We will, through subsequent communiqués, inform our community about our future steps and projects. Today, we are publishing our fundraising online link, where you can make your heartfelt donations and immediately receive your receipt for tax purposes:

<https://acc.akaraisin.com/aid4lebanon>

Let's reach out to the Armenian community in Lebanon.

Canadian Committee for the relief of Armenians in Lebanon

May 28, 2020

ARF of Armenia warns of 'irreversible losses'

YEREVAN—The government's tense response to opposition forces, especially the Armenian Revolutionary Federation, last week, promoted the party's Supreme Council of Armenia to issue a statement on Sunday, warning of "irreversible losses" in the country as a result of the leadership's use of what it called "oppressive methods" to deal with the opposition.

The ARF Supreme Council of Armenia also convened a meeting of five opposition political parties at its headquarters to discuss the current situation in Armenia.

The opposition parties' and ARF's concerns are stemming from the spread of the coronavirus in Armenia at staggering rates, and the government's failure in leading the country during the global pandemic crisis.

The war of words between the ARF and Prime Minister Nikol Pashinyan escalated late last week when the prime minister, addressing criticism from the ARF, threatened the 130-year-old party's "political death."

This comes as similar criticism by the parliamentary opposition has grown in Armenia, with Gagik Tsarukyan, the head of the second largest parliamentary faction, the Prosperous Armenia Party, demanded the government resignation last week.

On June 14, Tsarukyan was questioned for hours on charges of alleged fraud and embezzlement, leading hundreds of his supporters to stage a demonstration in front of his residence. More than 200 protesters were arrested and the next day calls for revoking his parliamentary immunity to stand prosecution were voiced by pro-

government officials.

"The government is, once again, responding to the opposition's political assessment with repressive methods," said the ARF Supreme Council of Armenia statement on Sunday.

"Especially now, when the country is facing serious domestic and foreign threats resulting from the leadership's selfish governance, one person's blatant aspirations to establish an authoritarian regime is becoming evident," added the statement.

"We, once again, demand from the leadership to return to the political arena. Or else, this approach undoubtedly will deepen the instability in the country and result in irreversible losses, the responsibility for which will lie on the shoulders of today's government," said the statement.

The ARF Supreme Council of Armenia chairman Ishkhan Saghatelian said that a meeting of five opposition party leaders was convened in the ARF's offices in Yerevan on June 14.

Participating in the meeting were Arthur Grigoryan of the Prosperous Armenia Party, Armenia's former NSS director Arthur Vanetsyan who is the leader of the Hairenik party, Arthur Ghazinyan, the chairman of the "One Armenia" party and Avedik Chalabyan, the deputy chairman of the "National Agenda" party.

The current situation in Armenia was discussed with Saghatelian saying that there was "mutual understanding" among the participants, telling Azatutyun.am that they did not reach any agreements by will continue meeting.

Canada stops military exports to Azerbaijan and bans arms sales to Turkey

OTTAWA — On May 29, Global Affairs Canada (GAC) published its annual report on Canada's Military Exports, where it had mentioned that no military export permits were issued to Azerbaijan during 2019, reported the Armenian National Committee of Canada (ANCC).

Since the sale of armoured vehicles from private Canadian companies to the Republic of Azerbaijan in 2017, this is the second year in a row that Canada has not included Azerbaijan in the list of countries with whom it trades military goods. Following Turkey's "Operation Peace Spring" in Syria in October 2019, Canada also banned military exports to Ankara, which was renewed indefinitely in April 2020.

Following the publication of the report, on June 4th, 2020, the ANCC sent a letter to Canada's Foreign Affairs Minister, the Hon. Francois-Philippe Champagne, commending the government's decision and urging the minister to continue refraining from engaging in arms trade with both Turkey and Azerbaijan.

In the letter, ANCC Co-Presidents, Hrag Tarakdjian and Shahen Mirakian said "Tur-

key and Azerbaijan pose a significant military threat within their immediate region and beyond. While Turkey continues to destabilize the Middle East and threaten the very existence of local minorities, Azerbaijan has significantly increased its military preparedness, constantly signalling a renewal of hostilities in the Republic of Artsakh, while threatening to attack the Republic of Armenia directly."

ANCC's co-presidents also shared their hope that based on Canada's arm's export regulations and Ottawa's accession to the Arms Trade Treaty, military export permits bound for Turkey and Azerbaijan will become subject to a more rigorous assessment process.

"Canada simply cannot become complicit in the unspeakable war crimes and human rights abuses sanctioned and carried out by regressive dictatorships such as Turkey and Azerbaijan," mentioned the letter.

"We will continue to monitor the trade of military goods between Canada, Turkey and Azerbaijan and ensure that our government always does the right thing" they concluded.

National cooperation is imperative to overcome crisis, says ARF Bureau Chairman

YEREVAN—In an interview published by Yerkir.am on June 14, Armenian Revolutionary Federation Bureau chairman Hagop Der Khachadourian emphasized the imperative for national cooperation to overcome the current crisis in Armenia, adding that there is a need for the formation of a new brand of government.

Below is an English translation of the interview:

Yerkir.am: *How do you assess the current situation of combatting the pandemic in Armenia?*

